ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

"20" "05" 2016թ. Գ/Հ 16184

ՀՀ կրթության և գիտության նախարար
Լևոն Մկրտչյանին

ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 3/8

Հարգելի պարոն Մկրտչյան

Վերջին մեկ շաբաթվա ընթացքում մեր կազմակերպությունը քաղաքացիներից բազմաթիվ ահազանգեր է ստացել Երևան քաղաքի դպրոցներում անօրինական դրամահավաքի վերաբերյալ: Դրամահավաքը, մասնավորապես, կազմակերպվում է ավարտական դասարաններից (4-րդ, 9-րդ և 12-րդ) «տնօրենին տալու» համար, ինչպես նաև քննական առարկաները նույն դպրոցի ուսուցիչների մոտ նախապատրաստվելու նպատակով:

Մեզ հետ հեռախոսազրույցներում քաղաքացիները մատնանշել են Երևանի Նար-Դոսի անվան թիվ 14 հիմնական դպրոցը, Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոցը, Վարդգես Պետրոսյանի անվան թիվ 51 հիմնական դպրոցը, Հովհաննես Պողոսյանի անվան թիվ 82 հիմնական և թիվ 174 հիմնական դպրոցները, որտեղ յուրաքանչյուր ավարտական դասարանի կողմից տնօրենին տրվող գումարը կազմում է 20-30 հազար դրամ, իսկ դրամահավաքի մյուս գումարը հավաքվում է ուսուցիչների կողմից քննական առարկաները պարտադիր կամավոր կերպով անցկացնելու համար: Մեծ է հավանականությունը, որ այս արատավոր երևույթը առկա է նաև հանրապետության մյուս դպրոցներում ևս:

Սույն տեղեկատվությամբ դիմելով Ձեզ, որպես ոլորտի համար պատասխանատու կառավարման լիազոր մարմին, խնդրում ենք միջոցներ ձեռնարկել նշված փաստերը ստուգելու, մեղավորներին պատժելու և նման անօրինական գործելաոճը դպրոցներում կանխելու ուղղությամբ:

Հարգանքով՝

ՀԿ փոխտնօրեն Սոնա Այվազյան

Հայաստան, Երևան, 0019, Անտառային փողոց, տուն 164/1
Հեռ.՝ (374 10) 569589, 569689 • Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am • www.transparency.am